ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆԿԱՀԱՅ» (ՆԱՀԱՐԱՊԱԿԱՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 61 - 62 (16762) ՇԱԲԱԹ 3 ՕԳՈՍՏՈՍԻ 2019 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵԹՐԻ

ՏԱՐԱԴՐԱՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՊԵՏՔ Է ԱՎԱՐՏՎԻ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ՁԳԱԼԻ Է ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԴՐԱՄԻ ԿՈՒՐՍԻ ՏԱՏԱՆՈՒՄԸ»

ԿՏՐՈՒԿ ԱՐԺԵԶՐԿՈՒՄԻՑ ՀԵՏՈ, ԼԱՐԻԻ ԿՈՒՐՍԸ ՍԿՍԵՑ ԿԱՅՈՒՆԱՆԱԼ

Վերջին երկու օրվա ընթացքում, Վրաստանի ազգային տարադրամի արժեզրկման միտումը կասեցվեց եւ կուրսը սկսեց կայունանալ: Լարիի արժեզրկումը կասեցվեց Վրաստանի Ազգային բանկի կողմից օգոստոսի 1-ին վաճառքի հանած շուրջ 40 միլիոն դոլարի շնորհիվ (այդ գումարից 32 միլիոնը անմիջապես վաճառվեց): Ներկա դրությամբ, լարիի կուրսը բարելավվել է 1,4 տոկոսով, եւ օգոստոսի 2-ի դրությամբ, մեկ դոլարի փոխարժեքը կազմում է 2,92 լարի:

Օգոստոսի 2-ի կառավարության նիստին նախորդող ավանդական մամլո ասուլիսում, Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, անդրադառնալով վերջին երկու օրերին լարիի կուրսի ամրապնդման թեմային, նշեց, որ նախադրյալներ կան, որ լարին կվերադառնա իր բնական եւ կայուն նշանագծին:

- Արժեզրկումից հետո, վերջին երկու օրերին վավերացված ամրապնդման միտումը ցույց է տալիս, որ լարին բոլոր նախադրյալներն ունի վեադառնալու իր բնական եւ կայուն նշանագծին,- հայտարարեց վարչապետը եւ հավելեց, որ պետք է ավարտվի այն ժամանակը, երբ բնակչության համար տարադրամի կուրսի տատանումը զգալի է:

- Մեկընդմիշտ պետք է ավարտվի այն ժամանակը, երբ բնակչության համար կուրսի տատանումն այդքան զգալի է,-հայտարարեց վարչապետը:

Լարիի արժեզրկումը առնչելով երկրում վերջին ժամանակներում ծավալված իրադարձությունների հետ՝ վարչապետը նշեց,

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՅԱՍՏԱՆ

ՁԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԵՐԸ, ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐԸ ԿԲԱՐՁՐԱՑՎԵՆ

2019 թվականի առաջին կիսամյակում, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պետական բյուջեի եկամուտներն ավելացել են 25,1 տոկոսով կամ 152 միլիարդ դրամով: Այս մասին «Ֆեյսբուքի» իր էջում գրել է վարչապետ Նիկոլ Փաշինյանը, հիշեցնելով՝ հեղափոխությունից առաջ խոստացել էր, որ մեկ-երկու տարում բյուջեի եկամուտները կավելանան 25-30 տոկոսով:

Բյուջեի եկամուտների ավելացման արդյունքում, ըստ Կառավարության ղեկավարի, հնարավորություն է ընձեռվել նախաձեռնել հետեւյալ խոշոր ծրագրերը.

(Շարունակությունը՝ 7-րդ էջում)

ՀԱՄԱՅՆՔ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ԲԱԹՈՒՄԻ

Հուլիսի 26-27-ը Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանը ճանաչողական այցով գտնվում էր Բաթումիում:

Այցի շրջանակներում, կայացավ Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահ Թոռնիկե Ռիժվածեի հանդիպումը Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանի հետ:

Թոռնիկե Ռիժվածեն Կիրակոս վարդապետին շնորհավորեց առաջնորդական տեղապահ նշանակվելու կապակցությամբ, կարեւորեց Աջարիայի հայ ազգաբնակչության ընդգրկվածությունը Ինքնավար Հանրապետության տնտեսական, քաղաքական, հասարակական կյանքին եւ արժեւորեց Վիրահայոց թեմի հետ Ինքնավար Հանրապետության համագործակցությունը:

Աջարիայի Ինքնավար Հանրապետության կառավարության նախագահի եւ Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահի կողմից արտահայտվեց համագործակցությունը շարունակելու պատրաստակամություն:

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎՈՒՄ Է C ՀԵՊԱՏԻՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ



Հուլիսի 28-ին C հեպատիտի դեմ պայքարի համաշխարհային օրը Վրաստանի առողջապահության նախարարությունը ձեռնամուխ եղավ նոր «Դու-C» նախագծի կիրարկմանը:

C հեպատիտի պայքարի դեմ նոր փուլի մեկնարկի միջոցառմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն եւ առողջապահության նախարար էկատերինե Տիկարիձեն: Նախագծի նպատակն է, որպեսզի Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի անցնի C հեպատիտի ստուգում, քանի որ հիվանդությունը անցնում է առանց ախտանշանների եւ դրա բացահայտման միակ ուղին անալիզի ուղին է: Այսօր Վրաստանը միակ երկիրն է, որտեղ նորագույն դեղորայքով C հեպատիտի բուժումն իրականացվում է անվճար:

Նոր նախագծի մեկնարկի միջոցառմանը անցկացվեց նաեւ նախորդ ծրագրի չորսամյա գործունեության արդյունքների շնորհանդեսը: Ինչպես նշեց Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, այսօրվա դրությամբ, C հեպատիտի ստուգում է անցել մեկուկես միլիոն քաղաքացի, իսկ 58 հազարը սկսել է բուժումը: Նրանցից 54 հազարը հաջողությամբ ավարտել է բուժման կուրսը:

- Ցանկանում եմ հավաստիացնել բոլորին, որ C հեպատիտը բուժվում է, եւ, ամենակարեւորը, մենք կարողացանք անել այնպես, որ այդ հիվանդությու-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՍԵՊՏԵՄԲԵՐԻՑ ԿԱՎԵԼԱՆԱ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄ ՍՏԱՑԱԾ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՎԱՐՁԸ

Վրաստանի կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Միխեիլ Բատիաշվիլու հայտարարությամբ, 2022 թվականին մանկավարժների աշխատավարձը կհասնի 1500-1800 լարիի:

Ինչպես նշեց նախարարը, ամեն տարի նվազագույնը 150 լարիով կավելանա այն մանկավարժների աշխատավարձը, ովքեր հաստատել են իրենց որակավորումը:

- Այս խոստումը երկարաժամկետ է, սակայն սեպտեմբերից կբարձրացվի բոլոր այն մանկավարժների աշխատավարձերը, ովքեր հաստատել են իրենց որակավորումը: Գործընթացը կշարունակվի ամեն տարի եւ նվազագույնը 150 լարիով կավելանա: Այսպիսով, փուլ առ փուլ կհասնենք 2022 թվականին, երբ աշխատավարձը կկազմի 1500-1800 լարի: Պետք է հասկանանք, որ մեկ օրում ամեն ինչը չենք կարող փոխել: Պետք է բարելավվի ենթակառուցվածքը, մանկավարժի որակավորումը պետք է բարձրանա, ինչի համար բազմաթիվ վերապատրաստման ծրագրեր ունենք, եւ նոր մանկավարժներ կհայտնվեն,- հայտարարեց Բատիաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԲԱԹՈՒՄԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

Բաթումիում եզրագիծը հատեց «Վրաստանն ընդդեմ կեղծարարության եւ ապօրինի առեւտրի» խորագրով միջազգային համաժողովը, որի աշխատանքին մասնակցում էին տարբեր երկրների պետական կառավարման մարմինների, մասնավոր հատվածի եւ միջազգային կազմակերպությունների ավելի քան 150 ներկայացուցիչներ: Մասնակիցների թվում էր նաեւ Հայաստանի պետական եկամուտների կոմիտեի պատվիրակությունը:



Քննարկվել են մտավոր սեփականության պաշտպանության եւ կեղծարարության դեմ պայքարի ժամանակակից մոտեցումներին վերաբերող հարցեր:

Համաժողովին Հայաստանի ՊԵԿ պատվիրակությունը ներկայացրեց մաքսային մարմինների կողմից մտավոր սեփականության իրավունքների պաշտպանության իրավական դաշտը եւ գործընթացը, այդ թվում՝ «ՀՀ արտաքին առեւտրի

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀՆ ՈՒ ՎԱՐՉԱՊԵՏԸ ՆԵՐԿԱ ԵՆ ԳՏՆՎԵԼ ՏՈՆԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻՆ

Օգոստոսի 2-ին Վրաստանի Ուղղափառ եկեղեցին հիշատակում է Սուրբ Իլիա Թեզբիտելու եւ Իլիա Ճշմարիտի (Ճավճավածե) օրը՝ «Իլիաոբա»: Տոնը նվիրված է նաեւ Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք, Սրբազնագույն եւ Երանաշնորհ Իլիա Երկրորդին:

Մայաքաղաքի Սուրբ Երրորդության (Սամեբա) աթոռանիստ տաճարում տոնական պատարագ մատուցեց Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը՝ հոգեւորականների հետ:

Տոնական պատարագին ներկա էին Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտաձեն, Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների ներկայացուցիչներ:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՍԿՍՎՈՒՄ Է C ՀԵՊԱՏԻՏԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՓՈՒԼ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նը դադարեց ժանտախտ լինել Վրաստանի համար,- հայտարարեց վարչապետը:

Հիշեցնենք, որ C հեպատիտի անվճար բուժման նախագիծը Վրաստանում մեկնարկել է 2016 թվականին: Այդ նախագծի շրջանակներում, տասնամյա պայմանագիր ձեւակերպվել է ամերիկյան Gilead Sciences ընկերության հետ, որը երկիրն ապահովում է թանկարժեք դեղորայքով: Ամենայն հավանականությամբ, նախագիծը կեզրափակվի 2020 թվականին, ուստիեւ մասնագետները քաղաքացիներին կոչ են անում, քանի դեռ հնարավոր է, օգտվել անվճար բուժման ծրագրից:

ՍԻՄՈՆ ԿԻԼԱՋԵ

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«ԵՎՐՈԲԱՍԿԵՏՈՎ» ԵՎՐՈՊԱՆ ՄՏՆՈՒՄ Է ՎՐԱՍՏԱՆ, ԻՍԿ ՎՐԱՍՏԱՆԸ՝ ԵՎՐՈՊԱ

Հուլիսի 30-ին կայացավ 2021 թվականի օգոստոսի 17-29-ը Եվրոպայի բասկետբոլի առաջնությունը Վրաստանում անցկացնելու հետ կապված շնորհանդեսը, որին մասնակցեցին Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին, երկրի գործադիր եւ օրենսդիր մարմինների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Միջոցառմանը իր ելույթում Վրաստանի նախագահ Սալոմե Զուրաբիշվիլին բասկետբոլիստների եւ այդ սպորտի սիրահարներին շնորհավորել է այդ մեծագույն հաղթանակի առիթով:

Վրաստանի նախագահի հայտարարությամբ, Մյունխենում ընդունված որոշումը շատ կարեւոր է, քանի որ դրա հիման վրա Վրաստանը եվրոպական այլ երկրների՝ Իտալիայի եւ Չեխիայի հետ հյուրընկալելու է ՖԻԲԱ-ի մի քանի խաղ:

- Սրանով Եվրոպան մտնում է Վրաստան, եւ Վրաստանը մտնում է Եվրոպա: Նման մեծ քայլը եւ հաղթանակը իրոք շնորհավորանքի են արժանի,- հայտարարել է Սալոմե Զուրաբիշվիլին:

ՀԱՄԱՅՆՔ

ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ԿԻՐԱԿՈՍ ՎԱՐԴԱՊԵՏԻ ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՑԸ ԲԱԹՈՒՄԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Բաթումի կատարած ճանաչողական այցի շրջանակներում, Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Կիրակոս վարդապետ Դավթյանը այցելեց Բաթումիի քաղաքապետարան, որտեղ հանդիպեց քաղաքապետ Լաշա Կոմախիձեի, փոխքաղաքապետ Լելա Սուրմանիձեի եւ մյուս պաշտոնյաների հետ:

Հանդիպումներին ներկա էին Բաթումիի Սուրբ Փրկիչ եկեղեցու հոգեւոր հովիվ Արարատ քահանա Գումբալյանը, տեղի ճանաչված հասարակական գործիչ, գործարար Արմեն Գեւորգյանը:

Սուրբ Փրկիչ եկեղեցում հուլիսի 28-ին Տեր Հիսուս Քրիստոսի Պայծառակերպության տոնին նվիրված Սուրբ եւ Անմահ պատարագը մատուցվեց Վիրահայոց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանի հանդիսապետությամբ:

Պատարագին ներկա էր Բաթումիում Հայաստանի գլխավոր հյուպատոս Եղիշե Սարգսյանը՝ տիկնոջ հետ:

Հավարտ Սուրբ պատարագի՝ առաջնորդական տեղապահը եւ ընկերակցող անձինք, այցելեցին Վիրահայոց թեմի Բաթումիի «Ալեքսանդր Մանթաշյանց» կրթամշակութային եւ երիտասարդական կենտրոն:

ՎՐԱՍՏԱՆ - ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՍՆԱԿՑԵՑ ԲԱԹՈՒՄԻԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

ազգային մեկ պատուհան» պորտալում գործող ռիսկերի կառավարման համակարգում տեղայնացված ռիսկի ավտոմատ պրոֆիլների հիման վրա իրականացվող հսկողությունը, մասնակցեցին մտավոր սեփականության պաշտպանության ոլորտում տարածաշրջանային համագործակցության հնարավորությունների եւ մարտահրավերների վերաբերյալ թեմատիկ քննարկումների՝ Վրաստանի, Ուկրաինայի, Բուլղարիայի, Ադրբեջանի եւ Թուրքիայի մաքսային մարմինների ներկայացուցիչների մասնակցությամբ:

ՉԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑ՝ ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԵԵՍՏՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Ամշարժ գույքի կադաստրի կոմիտեի պատվիրակությունը հյուրընկալվել է Վրաստանի հանրային ռեեստրի ազգային գործակալությունում:

Կոմիտեի անդամներին հանդիպել են հանրային ռեեստրի ազգային գործակալության ղեկավար Իվանե Ցարցիձեն եւ միջազգային կազմակերպությունների հետ հարաբերությունների բաժնի ղեկավար Մարի Խարծիանին: Նրանք հյուրերին ներկայացրեցին անշարժ գույքի գրանցման, էլեկտրոնային ծառայությունների եւ նորարարական տեխնոլոգիաների ուղղությամբ իրականացրած աշխատանքների փորձը, ինչպես նաեւ կարեւոր նախագծերն ու ապագայի ծրագրերը:

Եռօրյա այցի շրջանակներում, Հայաստանի պատվիրակության ներկայացուցիչները եղան նաեւ Գորիի հանրային ռեեստրում, տեղում ծանոթացան աշխատանքի առանձնահատկություններին:



ԱՄՆ

«ՍԱՌԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ» ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

Օգոստոսի 2-ից ԱՄՆ-ը պաշտոնապես լքեց փոքր եւ միջին հեռահարության հրթիռների ոչնչացման մասին Ռուսաստանի հետ կնքած պայմանագիրը: Ավելի վաղ, Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը կասեցրել էր համաձայնագիրը: Վաշինգտոնը Մոսկվային մեղադրում էր նոր հրթիռներ արտադրելու փաստաթղթի պայմանների խախտման մեջ:

Փոքր եւ միջին հեռահարության հրթիռների վերացման մասին համաձայնագիրը ԱՄՆ նախագահ Ռոնալդ Ռեյգանը եւ Խորհրդային Միության նախագահ Միխայիլ Գորբաչովը ստորագրել են 1987 թվականին:

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշի գնահատմամբ, համաձայնագրի դադարեցմամբ աշխարհը հզոր գործիք է կորցնում միջուկային պատերազմի զսպման հարցում:

ԱՖՂԱՆՍՏԱՆԻՑ ՁՈՐՔԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԲԵՐՎԵԼՈՒ

Միացյալ Նահանգների իշխանությունները պատրաստվում են իրենց հազարավոր զինծառայողներին դուրս բերել Աֆղանստանից, հանրապետությունում խաղաղ կարգավորման գործարքի շրջանակներում «Թալիբյան» արմատական շարժման կողմից մի շարք զիջումների փոխարեն:

Պայմանավորվածություններին համապատասխան, թալիբները պետք է Աֆղանստանի կառավարության հետ բանակցություններ սկսեն ավելի ընդգրկուն հաշտության համաձայնագրի շուրջ: Ըստ որում, ԱՄՆ-ը երկրում իր զորակազմը կկրճատի մոտավորապես 14 հազարից մինչեւ 8-9 հազար զինծառայող:

Համաձայնությունների շրջանակում, թալիբները պետք է, մասնավորապես, պահպանեն հրադադարի ռեժիմը եւ հրաժարվեն «Ալ Քաիդա» ահաբեկչական ցանցի հետ կապերից:

ԹՈՒՐՔԻԱ ԿՆԵՐԲԵՐՎԻ ՌՈՒՍԱԿԱՆ ՀՐԹԻՌՆԵՐԻ ՆՈՐ ԱՐՏԱԴՐԱՔԱՆԱԿ

Թուրքիան ակնկալում է, որ ռուսական S-400 զենիթահրթիռային համակարգերի դիվիզիոնների մատակարարումների երկրորդ փուլը կսկսվի 2020 թվականին: Այդ մասին հայտարարում է Թուրքիայի Պաշտպանական արդյունաբերության վարչության ղեկավար Իսմայիլ Դեմիրը:

Նրա խոսքով, ԱՄՆ-ը «ոչ մի կարգի տեխնիկական հիմնավորում չի բերել իր այն փաստարկի համար, թե S-400-ները չեն կարող աշխատել F-35 կործանիչի հետ»:

ԽՈՐՎԱԹԻԱ ԱՐՅՈՒՆՈՑ ԳԻՇԵՐ ՁԱԳՐԵԲՈՒՄ

Խորվաթիայի մայրաքաղաք Զագրեբում օգոստոսի 1-ի ուշ երեկոյան գտել են գնդակահարված վեց մարդ:

Ձոհվել է վեց մարդ, որոնց թվում, ըստ ոչ պաշտոնական տվյալների, կա չորս երեխա:

Նրանց մարմիններին եղել են հրազենային վերքեր:

Մեկը՝ յոթամսյա մանկիկը, ողջ է մնացել, սակայն վերքեր է ստացել եւ հոսպիտալացվել: Նախնական տվյալներով, սպանությունը կատարել է մի տղամարդ: Հանցագործությունը կատարելուց հետո, նա քաքնվել է: Ենթադրվում է, որ հանցագործության դրդապատճառ է դարձել մարդասպանի նախկին կնոջ եւ նրա նոր զուգընկերոջ կապից բխող խանդը:

Հանցագործին փնտրում է ոստիկանությունը:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄ

ՄԱՄՈՒԿԱ ԲԱԽՏԱՁԵ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԿՈՒՆԵՆԱ ԽՈՐՋՐՅԱ ՆԱՎԱՀԱՆԳԻՍՏ»

TBC բանկի շուրջ վերջին ժամանակներում ծավալված իրադարձությունները բարձրացրեցին նաեւ այդ բանկի կողմից ֆինանսավորվող Անակլիայի խորջրյա նավահանգստի շինարարության առնչվող հարցը:

Առանձին տնտեսագետների համոզմամբ, բանկի նախկին ղեկավարների՝ Մամուկա Խազարածեի եւ Ջափարիձեի դեմ՝ բանկային միջոցների յուրացման մեղադրանքը միանգամայն պայմանավորված էր խորջրյա վերոնշյալ նավահանգստի շինարարության հետ, ուստի կար մտահոգություն, որ երկրի համար կենսականորեն կարեւոր այդ օբյեկտի շինարարության գործընթացը կխափանվեր:

Մինչդեռ, Վրաստանի կառավարությունը, բազմիցս հայտարարել եւ հայտարարում է, որ նավահանգստի շինարարությանը ոչինչ չի սպառնում, եւ այն կշարունակվի սահմանված ժամանակացույցի համաձայն: Դա իր հաստատումը գտավ նաեւ Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտածեի հայտարարության մեջ: Նա հավաստեց, որ «Անակլիայի նախագիծը մեզ համար ունի ռազմավարական նշանակություն, եւ հիշեցնեմ, որ հենց մեր քաղաքական թիմն էր այս կարեւոր նախագծի նախաձեռնողը»:

Ինչպես նշել է վարչապետը, առանց խորջրյա նավահանգստի, Վրաստանը չի կարող լիարժեք կերպով իրացնել տարանցիկ ներուժը:

- Ես բազմիցս հայտարարել եմ, որ անձամբ ակտիվ ներգրավված էի այս նախագծին տարիների ընթացքում: Առանց խորջրյա նավահանգստի, Վրաստանը չի կարող լիարժեք իրացնել իր տարանցիկ ներուժը, այստեղից ելնելով, այն մեզ համար ունի ռազմավարական նշանակություն եւ Անակլիայի նախագիծը պարտադիր կիրականացվի: Մենք ջանք չենք խնայի, որպեսզի Վրաստանն ունենա խորջրյա նավահանգիստ,- հայտարարեց Մամուկա Բախտածեն:



ՎԱՐՉԱՊԵՏԻ ՏԱՐԵԿԱՆ ՁԵԿՈՒՅՑԸ՝ ԱՇՆԱՆԱՅԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏՈՒՄ

Վրաստանի վարչապետ Մամուկա Բախտածեն երկրի խորհրդարանի աշնանային նստաշրջանի անդրանիկ նիստում հանդես կգա տարեկան զեկույցով: Այս մասին հայտարարեց խորհրդարանի առաջին փոխխոսնակ Թամար Չուգոշվիլին:

Նրա խոսքով, կանոնակարգի համաձայն, օրենսդրական մարմինը կառավարության զեկույցը պետք է լսեր հունիսի վերջին, սակայն Թբիլիսիում զարգացած դեպքերի պատճառով այն հետաձգվեց:

- Բացի այդ, զեկույցով խորհրդարան են ներկայանալու մարդու իրավունքների պաշտպանը եւ գլխավոր դատախազը,- հայտարարեց Թամար Չուգոշվիլին:

ԿՕԺԱՆԴԱԿՎԵՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՏԱՐԱՆՑԻԿ ՉՎԵՐԹԵՐԸ

Վրաստանի կառավարությունը որոշում է ընդունել մինչեւ 600 հազար եվրոյով սուբսիդավորել Ռուսաստանից տարանցիկ չվերթերը: Կառավարության որոշմամբ, խոսքը վերաբերում է Ռուսաստանից Երեւանի տարանցմամբ, Թբիլիսիի եւ Բաթումիի ուղղությամբ չվերթերին:

Համապատասխան պայմանագիրը կնքելու է «Վրաստանի օդանավակայանների միությունը»՝ յուրաքանչյուր ուղեւորի համար 90 եվրոյից ոչ ավելի փոխհատուցմամբ:

Որոշման մեջ չի կոնկրետացվում, թե որ ավիաընկերության հետ է նախատեսվում պայմանագիր ստորագրել:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՄԵՂԱԴՐԱՆՔ՝ ԻՐԱԿԼԻ ՕՔՐՈՒԱՇՎԻԼՈՒՆ

Թբիլիսիի ոստիկանության վարչությունը Վրաստանի նախկին պաշտպանության նախկին նախարար Իրակլի Օքրուաշվիլուն պաշտոնական մեղադրանք է ներկայացրել հունիսի 20-21-ը Վրաստանի խորհրդարանի շենքի առջեւ ծավալված իրադարձությունների կապակցությամբ: Իրակլի Օքրուաշվիլին գտնվում է նախնական կալանքի մեջ:

Հիշեցնենք, որ Իրակլի Օքրուաշվիլին ձերբակալվել է հուլիսի 25-ին: Առաջադրված մեղադրանքը նախատեսում է խմբային բռնության կազմակերպման, դրա ղեկավարման եւ մասնակցության փաստով:

Նշենք, որ հունիսի 20-21-ի իրադարձությունների կապակցությամբ արդեն ձերբակալված է 19 մարդ:

ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԱՎԵԼԱՑԵԼ ԵՆ ՍՊԱՌՈՂԱԿԱՆ ԳՆԵՐԸ

ԻՆՉԻ ՎՐԱ ԵՆ ԱՄԵՆԻՑ ՇԱՏ ԾԱԽՍՈՒՄ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Վիճակագրության ազգային ծառայության պաշտոնական տվյալներով, 2019 թվականի հուլիսին, նախորդ ամսվա համեմատ, Վրաստանում գնաճի մակարդակը կազմել է -0,02 տոկոս, իսկ տարեկան գնաճի մակարդակը՝ 4,6 տոկոս:

Նույն ժամանակահատվածում, բացառությամբ ծխախոտի, գնաճի ցուցանիշը, նախորդ ամսվա համեմատ, կազմել է 0,4 տոկոս, իսկ նախորդ տարվա համապատասխան ամսվա համեմատ, ակնհայտ է սպառողական գների 3,9 տոկոս աճը:

Վրաստանի վիճակագրական ծառայության տեղեկությամբ, ամենամսյա գնաճի ցուցանիշի ձեւավորման վրա հիմնական ազդեցություն է ունեցել գների փոփոխությունը հետեւյալ խմբերում. տրանսպորտ, սննդամթերք եւ ոչ ալկոհոլային խմիչքներ:

Ինչ վերաբերում է ծախսերին, ապա Վրաստանի բնակչության սպառողական ծախսերի մեծ մասը՝ 37,4 տոկոսը, բաժին է ընկնում սննդամթերքին, խմիչքներին եւ ծխախոտային արտադրությանը, իսկ ամենաքիչը՝ 3,4 տոկոսը՝ կրթությանը:

Ծախսերի բաժնում սննդամթերքին հաջորդում են ծառայությունների (ջուր, էլեկտրաէներգիա, գազ, ջեռուցում) ծախսերը, որոնց բաժին է հասնում ընդհանուր սպառողական ծախսերի 13 տոկոսը:

Ինչ վերաբերում է առողջապահությանը, ապա այս ոլորտում ծախսերը կազմում են 12,5 տոկոս: Առողջապահությանը հաջորդում է տրանսպորտը՝ 10,7 տոկոս: Մնացած ծախսերը բաշխվում են հագուստի ու կոշիկի, կենցաղային օգտագործման ապրանքների եւ այլ անհրաժեշտ պարագաների վրա:

ԿԱԴՐԵՐ

ՆՈՐ ԴԵՄՔԵՐ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔԻԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԱՏԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Ախալքալաքիի քաղաքապետ Յուրիկ Ունանյանի հրամանի համաձայն, հուլիսի 11-ից նոր ղեկավարներն արդեն սկսել են իրենց գործունեությունը:

Մագդա Ամիրշատյանը նշանակվել է Ախալքալաքիի մունիցիպալիտետի քաղաքապետարանի ենթակառուցվածքների, տարածքային կառավարման, ճարտարապետության եւ շինարարության բաժնի պետ: Նա աշխատում էր ենթակառուցվածքային ծառայությունում՝ որպես ավագ մասնագետ:

Ռոզա Յորդանյանը նշանակվել է պետական գնումների ծառայության պետ, սույն ծառայությունում նա աշխատում էր՝ որպես բաժնի պետ:

Թեյմուրազ Մճեդլիձեն նշանակվել է վերահսկման եւ արձագանքման ծառայության ղեկավար: Նա քաղաքապետարանում նոր աշխատակից է, Ախալքալաքում նա զբաղված էր առեւտրի ոլորտում:

ՀԱՄՈՍԱՎԼԵՑՈՒՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

RS CAR-Ի ՍՊԱՍԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՀԱՐԿԱՏՈՒՆԵՐԻՆ

Օգոստոսի 1-30-ը, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության շարժական սերվիս-կենտրոն RS CAR-ը հարկատուներին սպասարկումներ կմատուցի երկրի մասշտաբով 35 վայրերում, այն երկրամասերում, որտեղ տեղակայված չեն եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններ:

RS CAR միկրոավտոբուսը հագեցած է եկամուտների ծառայության սերվիս-կենտրոններում առկա տեխնիկական միջոցներին համապատասխան: Հարկատուները կարող են իրենց հարմար ժամանակահատվածում, առանց բնակավայրից դուրս գալու, ժամանակին ստանալ ցանկալի սպասարկում:

Եկամուտների ծառայության RS CAR շարժական սերվիս-կենտրոնը **օգոստոսի 1-ին** կգործի **Թեթրիծղարոյում**, Թամար թագուհու թիվ 34-ում, վարչության հարակից տարածքում, **օգոստոսի 29-ին՝ Ասպինձայում**, Թամար թագուհու փողոցում, «TBC բանկի» հարակից տարածքում, **օգոստոսի 30-ին՝ Նինոծմինդայում**, Պուշկինի փողոցում, վարչության շենքի հարակից տարածքում:

Նշենք, որ բոլոր վերոնշյալ վայրերում շարժական RS CAR սերվիս-կենտրոնները կգործեն ժամը 10:00-17:00-ը:

ԲԱՑԱՀԱՅՏՎԵԼ Է ՀԱՐԿԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՄԱՆ 440 ԴԵՊՔ

Հուլիսի 23-30-ը ներառյալ, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի կողմից երկրի ողջ տարածքով անցկացված ստուգիչ միջոցառումների արդյունքում, բացահայտվել է հարկային օրենսդրության խախտման 440 դեպք:

Մասնավորապես, ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության հարկային մոնիթորինգի դեպարտամենտի աշխատակիցները ստուգել են 2909 հարկատուի: Ստուգման արդյունքում, բացահայտվել են հարկային օրենսդրության հետեւյալ խախտումները. առանց ապրանքագրերի ապրանքների փոխադրման 120 փաստ, տնտեսական գործունեության իրականացման համար հարկատուի կողմից օրենսդրությամբ սահմանված կարգի 31 դեպք, կանխիկ գումարներով առքուվաճառքի ժամանակ գանձարկղային սարքի անտեսման 289 փաստ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՏԱՐԱԴՐԱՄ

ՄԱՍՈՒԿԱ ԲԱԽՏԱՋԵ. «ՊԵՏՔ Է ԱՎԱՐՏՎԻ ԱՅՆ ԺԱՄԱՆԱԿԸ, ԵՐԲ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏԱՐԱԴՐԱՄԻ ԿՈՒՐՍԻ ՏԱՏԱՆՈՒՄԸ ՉԳԱԼԻ Է»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որ բոլոր վերլուծությունները ցույց են տալիս, որ ներկա դրությամբ, հիմնարար բոլոր գործոններն ավելի քան կայուն են եւ, ելնելով դրանից, լարին չափից ավելի է արժեզրկվել: Կառավարության ղեկավարի խոսքով, ընթացիկ տարվա մայիսն ու հունիսը լավագույնն էին Վրաստանում զբոսաշրջությունից ստացված եկամուտների տեսանկյունից, եւ ծրագրվում էր այդ ոլորտից ավելի շատ միջոցներ մոբիլիզացնել երկրի էկոնոմիկայի համար, սակայն վերջին ժամանակների իրադարձություններն այդ գործընթացն արգելակեցին:

Հիշեցնենք, որ ընթացիկ տարվա սկզբից, դոլարի նկատմամբ լարին արժեզրկվել էր գրեթե 30 թեթրիով: Ազգային տարադրամի արժեզրկումը վավերացվել էր նաեւ այլ տարադրամների (եվրո, ֆունտ ստերլինգ, ռուբլի, դրամ, մանաթ...) նկատմամբ: Հատկանշական է այն փաստը, որ լարիի արժեզրկման միտումը վավերացվում էր ամեն օր, եւ տնտեսագետների հաշվարկներով միայն վերջին մեկ ամսվա ընթացքում լարին դոլարի նկատմամբ արժեզրկվել էր 2,5 տոկոսով:

Լարիի գնողականության անախընթաց անկումը իշխանությունները հիմնականում պայմանավորում են զբոսաշրջիկների հոսքի կտրուկ նվազմամբ: Ինչպես հայտարարեց Վրաստանի Ազգային բանկի ղեկավար Կոբա Գվենետաձեն, Վրաստանը վերապրում է արտաքին շոկ, որն ազդում է լարիի փոխարժեքի վրա:

- Զբոսաշրջության հոսքի սպասվող քանակությունը Վրաստանում կրճատվել է, եւ դա հաստատվում է թվերով: Դա շատ հիվանդագին գործընթաց է: Ես միանգամայն հասկանում եմ բոլոր նրանց, ովքեր վերապրում են այդ ազդեցությունը,- հայտարարեց Ազգային բանկի նախագահն ու հավելեց, որ ստեղծված դրությունից ելքը ապադոլարացումն է:

Նրա խոսքով, Ազգային բանկը ուշադրությամբ հետեւում է արժեզրկման եւ փոխանակման նոմինալ կուրսի մակարդակին, եւ, անհրաժեշտության դեպքում, բանկը կօգտագործի իրավիճակի կայունացման համար իր տնօրինության տակ գտնվող լծակները:

- Մենք գտնում ենք, որ, այսօրվա դրությամբ, գործող փոխանակման նոմինալ կուրսը, որը հաշվի են առնում նաեւ մեր առեւտրական գործընկերները, շատ ավելի բարձր մակարդակի է, քան արտաքին շոկը, որն առկա է: Եթե համոզվենք, որ իրադարձությունների նման զարգացումը փոխանցվում է արժեզրկման վրա, կընդունենք համապատասխան միջոցներ: Սակայն այն, որ արժեզրկման արդյունավետ կուրսը շատ ավելի ուժեղ է, նրա վկայությունն է, որ գործընթացը երկար չի տեւի: Երկրում մակրոտնտեսական վիճակը բարվոք է: Միակ բաղադրիչը, որը որոշակիորեն վատթարացել է, զբոսաշրջության սեկտորից տարադրամի հոսքի նվազեցումն է,- հայտարարեց Կոբա Գվենետաձեն:

Լարիի կուրսի ամրապնդման վստահություն է հայտնել նաեւ Վրաստանի ֆինանսների նախարար Իվանե Մաճավարիանին: Նրա խոսքով, երկրի ազգային արժույթը, որը մեկուկես ամսում արժեզրկվել է 6,6 տոկոսով, կամրապնդվի ընթացիկ շաբաթվա ընթացքում: Պարզաբանելով արժեզրկման պատճառները՝ ֆինանսների նախարարը նշեց.

- Դա տեղի ունեցավ սոսկ այն իրադարձությունների պատճառով, որոնք լուրջ խնդիրների վերածվեցին զբոսաշրջության ոլորտում, ինչպես նաեւ կից հատվածներում: Համապատասխանաբար, դրան նաեւ ավելացան այն սպասումները, որոնք է'լ ավելի «մռայլ» էին եւ է'լ ավելի ծանր, քան ըստ էության այդ երեւույթները: Ի վերջո, մենք ստացանք այս արդյունքը:

Ազգային տարադրամի՝ լարիի կուրսի կայունացման վրա նշանակալի ազդեցություն գործեց օգոստոսի 1-ին Ազգային բանկի կողմից 40 միլիոն ԱՄՆ դոլարի ազատ վաճառքը (այդ գումարից 32 միլիոն վաճառվել էր): Արդյունքում, դեռեւս հուլիսի 31-ին դոլարի նկատմամբ լարիի պաշտոնական կուրսի՝ 2,95-ի (թեպետ առանձին փոխանակման կետերում այն արդեն գերազանցել է 3 լարիի սահմանագիծը) դիմաց, արդեն օգոստոսի 2-ին այն սկսեց նվազել (1 դոլարի դիմաց՝ 2,90 լարի) եւ լարիի կուրսի կայունացման միտումը շարունակվում է

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ ՀԱՊԱՐԱԿՎՈՒՄ ԵՆ

Հուլիսի 31-ից սկսվել է 2019-2020 ուսումնական տարվա միասնական ազգային քննությունների արդյունքների հրապարակումը: Նախ հանրության ուշադրությանը ներկայացվեցին ընդհանուր ունակությունների, ապա վրաց լեզվի ու գրականության, ապա օտար լեզվի քննությունների արդյունքները:

Վրաստանի գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնի ղեկավար Սոփո Գորգոձեի հայտարարությամբ. ընդհանուր ունակությունների նվազագույն պատնեշը հաղթահարել է դիմորդների 87 տոկոսը, քննչական գործընթացից դուրս է բերվել դիմորդների 13 տոկոսը:

Ինչպես հայտարարեցին գնահատման եւ քննությունների ազգային կենտրոնում, օգոստոսի 1-ին եւ 2-ին հրապարակվել են վրաց լեզվի եւ գրականության, ինչպես նաեւ օտար լեզուների քննությունների արդյունքները: Դրանց ծանոթանալու համար հարկ է մուտք գործել գործակալության պաշտոնական կայք-էջ: Համակարգ մուտք գործելու համար դիմորդները պետք է համապատասխան դաշտում մուտքագրեն անձնական համարը եւ նույնականացման համարը: Արդյունքների հետ միասին, կայքում տեղադրված են նաեւ դիմորդի աշխատանքի պատճենը եւ ստացած միավորը: Արդյունքները ստանալ հնարավոր կլինի նաեւ կարճ տեքստային հաղորդագրությամբ: Դրա համար դիմորդներն իրենց հեռախոսներից պետք է հաղորդագրություն ուղարկեն իրենց նույնականացման համարով՝ 9 33 33 հեռախոսահամարին (ծառայության արժեքը 0,50 լարի է):

ԱՐԵՎԻԿ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅՈՒՆ

GIPA-Ի ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ

«GIPA Media Lab ծրագրի «Մուլտիմեդիա հմտություններ բազմամշակութային հասարակության եւ երկրի համար» շրջանավարտներից 9-ը մրցանակ են ստացել»,- հաղորդում է Jnews-ը: Նրանցից 4-ը հնարավորություն են ստացել անվճար սովորել GIPA համալսարանի բակալավրի աստիճանում, ինչպես նաեւ մեկ ուսանողուհի՝ մագիստրատուրայում:

Քվեմո-Քարթլիի եւ Սամցխե-Ջավախեթիի տարբեր դպրոցների աշակերտներ եւ երիտասարդներ հասարակության շրջանում հատուկ նշանակություն ունեցող եւ խնդրահարույց թեմաներ են հետաքննել, որի արդյունքում լրագրողական աշխատանքներ ստեղծել: Աշխատանքները ներկայացվել են ֆիլմերի եւ ֆոտոպատմությունների տեսքով, որոնք լուսաբանել են այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ ջրի բացակայություն, երեխաներն ու նրանց կախվածությունը գաջեթներից, միայնակ ծերություն եւ երիտասարդների զբաղվածություն, վաղ ամուսնություն եւ այլ թեմաներ:

Հուլիսի 31-ին Ղվարելի քաղաքում, Վրաստանի արդարադատության ուսումնական կենտրոնում, տեղի ունեցավ GIPA MEDIA LAB-ի եզրափակիչ արարողությունը: Արհեստավարժ ժյուրին ընտրեց հաղթողներին:

GIPA-ի համալսարանում անվճար սովորելու հնարավորություն ստացան Ախալքալաքիի մունիցիպալիտետի Խորենիա գյուղից Սեւակ Գաբրիելյանը եւ Նինոծմինդայից՝ Կարեն Շահբեկյանը:

Հետաքրքիր զուգադիպությամբ, Կարենն ու Սեւակը մրցանակաբաշխության օրն ընդունվել են Թբիլիսիի պետական բուհեր, սակայն նրանք կրթությունը կշարունակեն GIPA-ում: Կարենը հետաքրքրված է համակարգչային տեխնոլոգիաներով, իսկ Սեւակը ուզում է լրագրող դառնալ:

Բացի անվճար սովորելու հնարավորությունից, Սեւակ Գաբրիելյանի մուլտիմեդիա պատմությունն արժանացավ նաեւ երկրորդ մրցանակի: Իսկ 3-րդ տեղի մրցանակին արժանացավ Վարդուհի Կուրղինյանի մուլտիմեդիա պատմությունը: Մրցույթի հայազգի մասնակիցներից մրցանակ ստացավ նաեւ «Ինքդ՝ քո ուժերով» ֆիլմը, որի հեղինակները՝ Արտեմ Նալբանդյանը, Շալիկո Ներսիսյանը, Նազելի Խաչատրյանը, պատմում են 15-ամյա մի տղայի մասին, ով իր ձեռքերով բռնցքամարտի տանձիկ է սարքել եւ կիսաքանդ շենքում պարապում է գյուղի երեխաների հետ:

GIPA-ի լրագրության դպրոցի դեկան Նինա Իվանիշվիլու խոսքով, ծրագրի նպատակն է երիտասարդներին միավորելը, ովքեր մեծ քաղաքների բնակիչների համեմատ, կյանքում ավելի քիչ հնարավորություն ունեն արդի աշխարհում ժամանակակից կրթություն ստանալու համար:

Կազմակերպիչների խոսքով, այս տարվա արդյունքներից ավելի գոհ են, քան նախորդ, նրանք երեխաների ու ծնողների շրջանում ավելի շատ վստահություն եւ հավատ են տեսնում:

Միջոցառումը կազմակերպվել էր «GIPA MEDIA LAB» ծրագրի «Մուլտիմեդիա հմտություններ բազմամշակութային հասարակության եւ երկրի համար» ծրագրի շրջանակներում: Ծրագիրը ֆինանսավորվում է USDEP-ի եւ Վրաստանում ԱՄՆ դեսպանատան կողմից:

ՌԻՄԱ ՄԱՐԱՆԳՈԶՅԱՆ

ԿԱՐԾԻՔ

ԵՐԵՎԻ ԼԱՎ ԿԼԻՆԻ, ԵԹԵ ՄՆԱ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆԸ

Վերջին քսան տարիների ընթացքում, Նինոծմինդայի մունիցիպալիտետում կատարվել են հսկայական աշխատանքներ՝ գյուղերի մեծ մասում կառուցվել եւ վերանորոգվել են արարողությունների տներ, սպորտդահլիճներ, ասֆալտապատվել մոտ 30-35 կմ ճանապարհ քաղաքում ու գյուղերում, համարյա բոլոր գյուղերում լուծված է ջրամատակարարման հարցը: Այս տարվանից վերականգնվեց «Գյուղիմ աջակցություն» կառավարական ծրագիրը, որով Ախալքալաքիի մունիցիպալիտետին հատկացվեց 922 հազար, իսկ Նինոծմինդային՝ 444 հազար լարի:

Նշված գումարներով իրականացվելիք աշխատանքները որոշեցին մունիցիպալիտետների բնակիչները: Բացի դրանից, նախատեսվում է հիմնանորոգել Նինոծմինդա-Ախալքալաքի, Նինոծմինդա-ՀՀ մաքսատուն ճանապարհները: Բոլորը չես թվարկի: Սա արդյունք է իշխող կուսակցության խելամիտ եւ հոգատար աշխատանքի, նրա վարած խելամիտ քաղաքականության: Բնականաբար, այս ամենի մեջ իր անգնահատելի մասնակցությունն ու ներդրումն ունի Նինոծմինդայի եւ Ախալքալաքիի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը: Տարածաշրջանում կատարվելիք յուրաքանչյուր ծրագրի իրականացման գործում նա ցուցաբերում է անմիջական մասնակցություն, խորհրդակցում ընտրողների հետ եւ նրանց կարծիքը հասցնում համապատասխան մարմիններին, իհարկե՝ ասելով իր ծանրակշիռ խոսքը: Ժողովուրդը հավատում է նրան, վստահում, քանի որ նրա խոսքը միշտ գործ է եղել: Կասկած չկա, որ առաջիկա ընտրություններում եւս նինոծմինդացին կքվեարկի իշխող կուսակցության օգտին: Սակայն, 2020 թվականի խորհրդարանական ընտրություններում մեծամասնական ընտրակարգի վերացումը մեծ մտահոգություն է առաջացրել ընտրողների մոտ: Պատճառը պարզ է. 20 տարի մեծամասնական ընտրակարգով ժողովրդի կողմից ընտրված Հենզել Մկոյանը, որը այդ տարիների ընթացքում ոչինչ չի խնայել իր առաքելությունը բարձր մակարդակով իրականացնելու համար, պետք է հանդես գա՝ որպես համամասնական, ի թիվս այնպիսի պատգամավորների, որոնք բացարձակապես կարող են կապ չունենալ մեր տարածաշրջանի հետ, եւ նրանց բոլորովին չհուզի մեր խնդիրները: Այս ընտրակարգը այնքան էլ հարմար չէ ազգային փոքրամասնություն հանդիսացող մունիցիպալիտետների բնակչությանը: Նրանք ցանկանում են խորհրդարանում ունենալ իրենց կողմից ընտրված անձ, ով իրենց հոգսերն ու խնդիրներն անմիջապես կհասցնի իշխանություններին: Բնակչությունը համոզված է, որ 2020թ. խորհրդարանական ընտրություններում թեկնածուն կառաջադրվի կուսակցության կողմից եւ կընտրվի համամասնական կարգով, եւ անկախ դրանից, պատգամավորական լիազորությունները կշարունակի կատարել նույն ոգով: Այնուամենայնիվ, սույն հարցը առավել արդյունավետ լուծելու նպատակով, ջավախահայությունը իշխանությունների, եւ հատկապես իշխող կուսակցության առաջ հարց է բարձրացնում՝ համամասնական կարգով ազգային փոքրամասնություն կազմող մունիցիպալիտետներից համամասնական կարգով ընտրված պատգամավորներին դե-ֆակտո օժտել մեծամասնական պատգամավորի գործառույթներով, որպեսզի նրանք առավել պատասխանատու լինեն ընտրողների առաջ:

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՍՊՈՅԱՆ
Իրավաբան
ք.Նինոծմինդա